

է այնուհետեւ հայրազգեական մայր եկեղեցի՝ «կաթուղիէն» լինէր:—Յամենայն դէպս, կրկնում ենք, այս ս. Գրիգորն էր Գուրին եկեղեցին, մինչ Գրիգոր Ռաֆիկ վանքը Գուրնում կառուցած լինելուն մէջ մի փաստ չկայ:

Շնորհ. Գ. Տէր Մկրտչեանի յօդուածի մէջ մի ուրիշ կէտ ևս մեր աչքին ընկաւ, որ չէմք կամենայ առանց յիշատակութեան թողնել: Նա—հապիւթանի ժողովի Բ. կանոնը յատաճ բերելով՝ նա ապացուցանում է, թէ Ե. և Զ. դարերում քրիստոնեաները «խզճի ազատութեան մասին նոյն գաղափարն ունէին», ինչ որ պարսիկները: Բայց մենք կարծում ենք, որ այդպիսի մոգեռն գաղափարներ, ինչպէս է «խզճի ազատութեան» գաղափարը՝ Ե. դար փոխադրելը միայն մարերի շփոթութիւն և թիւրիմացութիւններ պատճառել կարող է: Մեր ժամանակի մարդիկ և ազգութիւններ յերաւել շատ աւելի ընդարձակ չափով խզճի ազատութիւն են ընդունում կրօնական խնդիրներում, քան նախկին դարերում ընդունել կարող էին: Բայց դորա գլխաւոր պատճառը լուսաւորութիւնը չէ, և մէջ մանաւանդ «աւետարանական ոգու» զօրանալը մեր մէջ, այլ այն, որ կրօնը նոցա համար անտարբեր քան է դարձել. այն խնդիրներում, որոնք նոյնքան մօտ են նոցա որովհետեւ, որքան մօտ էր կրօնը Ե. և Զ. դարում մարդոց սրտերին՝ նոցա պակաս անաղատ չեն խզճով, քան վերջիններս:—Թէ Շահապիւթանի ժողովը պատուիրում է քարկոծել ու բազմաթիւ մէկ որ այդպիսի ժողովների կանոնները փոխ էին առնում սովորաբար ուրիշները և տարբեր կերպով էին դործադրում, քան զրուստ էին և միւս՝ մէջ մի քրիստոնեայ Ե. դարում խզճի ազատութեամբ չէր ուրանում իւր հաւատը, այլ սնտաի երկիւղի կամ անօրէն ցանկութիւնները ճշման ներքոյ. այնպէս որ նորան քարկոծելը խզճի ազատութեան բռնաբարում չէր լինի, այլ որբաղան ոգևորութեան և նախնախնորութեան արդիւնք. մանաւանդ քարկոծողներն իրենք զօրեղ իշխանութիւն չէին, ինչպէս էին Զ. դարի պարսիկները, այլ պէտք է դործէին տերղ իշխանութեան դէմ, պատժի երկիւղով:—Իսկ թէ «աւետարանի ոգին» որչափ կենդանի էր Ե. դարու Հայոց մէջ՝ դորա վիշակահանները ուրիշ անդ պէտք է որոնել: Այսպիսի մի վիշակահան է օրինակ Արաաշատի ժողովի պարսիկներին դրած թուղթը, որի նման զուտ աւետարանական ոգւով զրուածք քիչ կլինի ընդհանուր եկեղեցւոյ պատմութեան մէջ և որով մենք աւելի արթննալ կարող ենք, քան Հայ աղգի անցեալ ու ներկայ հոգեւոր կեանքի ուրիշ որ և է արտադրութեամբ:

Գ. Ա.



Հայր Գեորգ Այլիան. — Նոյեմբեր 9 լուսադէմին Վենետիկի ս. Ղազարու վանքում իւր մահկանացուն կնքեց թխուն և մէկ ամեայ հասակի մէջ Միխիթարեան Միաբանութեան ամենապատկառելի անդամը, մեր ժամանակի հայ գրականութեան ամենախառակաւոր մշակը՝ Հ. Գ. Այլիան: Նա համեմատաբար քիչ է յայտնի այն ժողովրդին, որի համար աշխատել է անդադար իւր երկարատե և բեղուն կեանքի ամբողջ ընթացքում. նորա մեծահասուր պատմագիտական — աշխարհագիտական երկասիրութիւնները մատչելի են միայն սակաւթիւ բանասէրների և դպրոցականների. աւելի ընդարձակ շրջաններում՝ մուտք է դործել նա իրրե բանաստեղծ, բայց ոչ իւր բոլոր բանաստեղծական գրուածներով, որոնց մեծ մասը ընդհանուրին դժուար ըմբռնելի գրաբար լեզուով է, և ոչ իսկ «Նահապետի» տառնեակ աշխարհաբար երգերով, այլ սուցանից հանած մի քանի համառօտ նուագներով և իմաստալից հայրենասիրական խօսքերով: Այնուամենայնիւ Հ. Այլիան թէ իրրե բանաստեղծ, թէ իրրե գիտուն մի քանի սերունդ է կրթել՝ «հայրենեաց հողն ու ջուր» ճանաչել ու սիրել սովորեցնելով, և դժուար է չափել, թէ որքան մեծ ու ընդարձակ է եղել նորա դաստիարակական ազդեցութիւնն այդ կողմից, և կլինի դեռ երկար ժամանակ Հ. Այլիան գրական դործիչ էր գրեթէ մանկութիւնից ի վեր, և նորա ողջ գործունէութեան կենտրոնը, ոգին ու նիւթը եղել է հայ հայրենիք. հայրենիքն իւր անցեալ փառքով, իւր քաղաքական և հոգեւոր կեանքի մէջ ապարեղ հանած հերոսներով, իւր շինուածներովն ու աւերակներով, իւր բնութեան ճոխութիւններով և իւր բնակչաց առաքինութիւններովն ու թերութիւններով՝ իւր չարաբաստիկ ներկայովն ու յուսատու ապագայով—անցել է նորա գրչի տակից այնպէս, որ շատ անգամ դժուար է որոշել, թէ ուր ոգեւունչ բանաստեղծն է խօսում և ուր հետաքննի պատմագէտն ու աշխարհագէտը. Հայաստանի հին ու նոր

աշխարհագրութեան ուսուցիչն է նա՝ այդ գաղափարի ամենալայն առումը։ Բայց Հ. Ալիշան մի և նոյն ժամանակ այն հաղուադիւտ մարդկանցից է՝ մանաւանդ թէ հայ մարդկանցից, որոնք այն են եղել, ինչ որ ուսուցել են, որոնց հոգին խօսել ու թելադրել է այն ազնիւ մտքերն ու վառ զգացումները, ինչ որ գրի է առել գրիչը։ Իբրեւ քրիստոնեայ, իբրեւ մարդ բարոյական տեսակէտից՝ նա անգուցական արժանեաց տէր մէկ անձ է եղել. այդ են վկայում բոլոր նորան ի մօտոյ ճանաչողները։ Տողերիս գրողին ևս, բազմաթիւ ուրիշ այցելունների շարքում՝ վիճակուած է եղել տեսնել նորան առաջին անգամ անձանաշէրի համեատ արտաքինով, և ապա երկար խօսակցութիւնից յետոյ միայն իմանալ, որ գիմացի կորացած խղճով ծերունին Հայոց նահապետն էր՝ միշտ երիտասարդ, միշտ աշխոյժ, — իւր աննկուն եռանդովն ու վերապայց ոգւով։ Նորա անշուք արտաքինի անկենդան մնացորդները գերեզմանում են այժմ, — ներքին կեանքի փառաւոր ու տեական արդիւնքը պէտք է մնայ միշտ կենդանի մեզ մօտ. իսկ յաւիտենականի համար մեզ մնում է մաղթել հանգիստ անմահութեան կայաններում։

Սակայն մենք իրաւունք ենք համարում այստեղ մի անձնական դիտողութիւն ևս աւելացնել. Վենետիկում մենք այն տալաւորութիւնն ենք ստացել, որ Հ. Ալիշան մեծ ջերմեռանդութեամբ աշխատում էր լրիւ ու անաղարտ պահել ամէն կերպ հայկականը իւր եկեղեցու ծէսերի, իւր միաբանութեան հոգեւոր կեանքի մէջ. ըստ երեւութին նա պարագլուխ էր միաբանութեան այն մասի, որ (ինչպէս մեզ թուեց) մաքառում է Հայ կաթողիկ համայնքի, և ի մասնաւորի Մխիթարեան միաբանութեան՝ լատինացման դէմ։ Որչափ ուղիղ է այս դիտողութիւնը, չենք կարող երաշխաւորել. կարծում ենք միայն, որ մօտիկ ազդեցւում երեւան պէտք է դան այդպիսի երկու մրցող կուսակցութիւններ Մխիթարեան միաբանութեան մէջ։ Յամենայն գէտս, ինչ որ Հ. Ալիշանին է վերաբերում, յիշեալ դիտողութիւնը մեզ այն համոզման է բերել, որ նա, իբրեւ

քրիստոնեայ և եկեղեցական՝ աւելի Հայ, եկեղեցու ժառանգութիւնից էր շունչ առնում, քան բուն աթմեան կաթողիկ եկեղեցուց, և այն մարդով միայն ջերմեռանդ կաթողիկ է եղել, որ հայ-քրիստոնէութիւնը կարողացել է հաշտեցնել իւր հօգու մէջ մի քանի կաթողիկական տեսութիւնների հետ։

Կ. Վ.

ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ և ՓԱԽՏՈՍԻ ՄԱՍԻՆ

Ա. Ագաթանգեղոս.

Գ. դարու Հայոց պատմութիւնը ուսումնասիրելու համար մենք ունինք անմիջական և միջնորդական աղբիւրներ։ «Անմիջական աղբիւր» ասելով ես ի նկատի ունիմ՝ այն գրութիւնները, որոնց հեղինակները կամ իբր ախանաւես են պատմում և կամ իրենց հաղորդած տեղեկութիւնները ուղիղ ախանաւեսներից են ստացել, լինին նորա Հայ թէ օտարազգիք (Յոյն, Ասորի և այլն), «Միջնորդական» անուանում եմ ընդհանրաւին այն աղբիւրները, որոնց պարունակած տեղեկութիւնները կամ անմիջական աղբիւրների վրայ են հիմնած և կամ բերանացի ու գրաւոր աւանդութիւնից հետո ամս։

Այս շրջանի պատմութեան համար մեր ունեցած անմիջական աղբիւրների շարքում առաջնակարգ տեղ են գրաւում Փառատոսի և Ագաթանգեղոսի պատմական երկերը։ Առանձին կարեւոր նշանակութիւն կունենան, դան է եկեղեցական պատմութեան համար, Ձեռնոր Գլակի «պատմութիւն Տարցնոյ» գործը, եթէ նա վաւերական լինէր։ Պրոֆ. Գր. Խալաթեան Հ. Գաթընձեանի հետ միասին անաւարակուսելի են կացուցել նրա ամենականութիւնը և գարու «Կարկաստան» լինելը։¹

1. 1877-ից սկսած, երբ Ալֆրէդ ֆոն Գուտշիլտի «Agathangelos» վերնադիրը կրող յօդուածը գերմանացի արեւելագէտների օրգանում երեւայ՝² այլ ևս մեր պատմագրին ընծայուած երկը միայն

1) Տես. Ձեռնոր Գլակ. Վիեննա, 1893. արտատպ. «Հանդէս Ամսօրեայից».

2) Zeitschrift d. deutschen morgenländischen Gesellschaft XXXI S. 1—60. արտատպած 1877. Լայպցիգ. Ֆրանց Ռեւլ հրատարակեց նոյնը Գուտշիլտի Ման երկապիտանաց շարքում, Լայպցիգ. 1893. S. 339—420. Յիշած գիտնական ամսագիրը ևս պէտք է նշանակեմ միայն ZDMG, իսկ վերջին ժողովածուն Ks.—Kleine Schriften վերնադրեց։